



ԲՆԻԿ ՎՅԵՐԵՆ «ՈՂ» ԲԱՌԻ ՍԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՈՎՊԱՆՈՒԵՐԵՆ–ՎՅԵՐԵՆ ԲԱՌՎՅԻՆ ԸՆԴՅԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

Բնիկ հայերեն «ոջ» բառը Հր. Աճառյանը ծագած է համարում բուն բացասական ո- («VO-») բաղադրիչից եւ անորոշի իմաստ ունեցող չ (Շ՛)-ից. «Ոջ «ոջ, չէ, մի՛»... Բնիկ հայ բառ. կազմված է ո՛+չ. վերջինը անորոշի նշանն է, ...իսկ ո բուն բացասականն է...»: Իսկ Պատրուբանիի կարծիքով՝ ո «ով» + հնխ. k₂e»² տարրերից: Բնիկ հայերեն «ոջ» բառի՝ ո՛+չ կազմության մասին այս տեսակետը կիսում է նաեւ ակադ. Գ. Ջահուկյանը՝ մի տարբերությունով. եթե Աճառյանը բուն բացասական իմաստի կրող է համարում առաջին՝ ո- բաղադրիչը, ապա, Գ. Ջահուկյանի կարծիքով, այն «կազմված է բնիկ հնդեւրոպական ա- եւ չ տարրերից, որոնցից երկրորդը գալիս է վերջահար *k՝- մասնիկից (հմմտ. ո-ք, ին-չ, այլեւ հ. հնդկ. चा, ավ. ča, հուն. ἔξ, լատ. -ex), իսկ առաջինի հարցը լիովին պարզ չէ...»³: Այսպիսով՝ երկու հեղինակներն էլ համակարծիք են, որ «ոջ» բառը կազմված է ո եւ չ տարրերից, սակայն՝ ի տարբերություն Հր. Աճառյանի, որը չ-ն համարում էր «անորոշի նշան», Ջահուկյանը գտնում է, որ -չ բաղադրիչը ծագում է «վերջահար *k՝- մասնիկից» (տե՛ս նաեւ Պատրուբանիի կարծիքը):

Բնիկ հայերեն ոչ բառի ստուգաբանություն իրականացնելու համար պետք է հասնել լեզվավիճակի այնպիսի հնություն, երբ վերոհիշյալ ո եւ չ տարրերը առանձին գործածություն եւ բառիմաստ ունեցող բառեր էին: Նման դեպքերում առավել հնագույն լեզվաընտանիքների լեզուների հետ համեմատություններն օգնում են գտնելու հայերենին վերաբերող եւ լու-

^{1*} Ստացվել է՝ 5.05.2025, գրախոսվել է՝ 6.06.2025: էլ. հասցե՝ orongo9@mail.ru:

² Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերէն արմատական բառարան (հետ այսու՝ ՀԱԲ), ԵՊՀ հրատ., հտ. 3, Եր., 1926, էջ 561:

³ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Եր., 2010, էջ 602–603:

սաբանման կարոտ այնպիսի հարցերի բացատրություններ, որոնք անհնար է գտնել, եթե սահմանափակվենք միայն հնդերոպական լեզուների հետ համեմատության տվյալներով: Այս տեսակետից պարզապես անգնահատելի է պոլինեզիական լեզուների, մասնավորապես, ռապանուի լեզվի դերը հայերենի այն հնությունը հասնելու համար, երբ նախդիրներն ու քերականական կազմիչները դեռևս առանձին գործածվող իմաստակիր բառեր էին. բավական է ասել, որ, օրինակ, հայերենի քերականական կազմիչների եւ նախդիրների՝ պոլինեզիական լեզուներում առկա զուգահեռների բացարձակ մեծամասնությունն այս լեզուներում անկախ գործածություն ունեցող իմաստակիր բառեր են:

Այսպես, օրինակ, մեզ հետաքրքրող ժխտական մասնիկներից ամենաակնհայտ ընդհանրությունը ռապանուերենում առանձին գործածություն ունեցող tae_1 ու te_3 իմաստակիր բառերի եւ գրաբարյան *տ-* եւ *չ-* ժխտական կազմիչների համընկնումն է.

ռապան. tae_1 1) «ոչ» - հայերեն բրբ. «չե» «ոչ», 2) «ան-», «առանց» - հայերեն *տ-* եւ *չ-* ժխտական նախածանցներ,

ռապան. te_3 «առանց, ան-» - հայերեն մանկական լեզվի տէ «չե», բրբ. «չե» «ոչ», նաեւ *տ-*, *չ-* ժխտական նախածանցներ:

Ինչպես տեսնում ենք, ոչ բառի *չ-* բաղադրիչը, որը Ջահուկյանը բխեցնում էր, «վերջահար * $-k'$ ՝ մասնիկից», ռապանուերենում առկա է առանձին գործածություն եւ բառիմաստ ունեցող երկու՝ tae_1 եւ te_3 բառերի տեսքով:

Բնիկ հայերեն ոչ բառի *-չ* բաղադրիչի հետքը գտնելուն մեծապես նպաստեց ընդգծված ժխտական իմաստով ռապանուերեն *vave kai kohe* բառակապակցությունը, որի իմաստն էր «անմատչելի, անհասանելի»: Այն մեզ հետաքրքրեց մի քանի պատճառներով. պարզ չէր, թե որն է այդ բառակապակցության գլխավոր անդամը, հայտնի չէր բուն ժխտական իմաստ արտահայտող բառը եւ բառակապակցությունը նշված էր երկու տարբեր բառարանային միավորների տակ: Առաջին անգամ այն բերվում է *kohe_2* արմատի տակ, ընդ որում՝ առանձին *kohe_2* արմատի համար որեւէ իմաստ չի նշվում, այն համարվում է անհայտ իմաստով բառ, պարզապես՝ *kohe_2*, *vave kai kohe* «անմատչելի»: Սակայն կային որոշ կողմնակի հուշումներ, որոնք թույլ էին տալիս կռահել, թե հայերենում այդ բառի անմիջական զուգահեռը որը կարող էր լինել եւ, ըստ այդմ, ի՞նչ իմաստ կարելի էր վերագրել այդ արմատին: Որո՞նք էին այդ հուշումները:

Հաշվի առնելով պոլիներգիական լեզուներում չգործող, բայց ուսանուներեն-հայերեն բառային ընդհանրություններում փաստված $h > x$ ($h > \text{խ}$) հերթագայության առկայությունը բազմաթիվ բնիկ հայերեն զուգահեռներում, ինչպես օրինակ՝

ուսպան. *horoi* «չորացնել» - գրբ. խորով «կրակի վրայ այրելը» (**khorou-* (**khoreu-*) **ker-* «այրել, վառել, ջեռուցել»)⁴

ուսպան. *heva* «խելագարություն», «խելագարվել» - գրբ. խել «գիժ, խելառ» (*(*s*)*kebh-* «կտրել, նեղել» (°), **kebh-* խել),

ուսպան. *hahari* «բարձրաձայն ծիծաղել» - գրբ. խախան-*f* «բարձրաձայն (ֆահ-ֆահ) ծիծաղ», խախանջել «այլանդակ ձայներ հանել» (համարվում են կրկնավոր բնաձայն կազմություններ), խաղ «ծաղր, կատակ» (**khhl-* (կամ **khəl-*) **kel-* «ֆշել, արագ շարժել») (°),

անհիմն շէր ենթադրել, որ

ա) անհայտ իմաստով ուսպանուներեն *kohe*₂ «°» արմատի անմիջական զուգահեռը հայերենում պետք է որ լիներ «կոխ» արմատը՝ «կոխելը, կոխկռտելը» իմաստով (ուսպան. *kohe*₂ «°» - գրաբարյան *կոխ* «կոխում, կոխոտում, կոխտված»)՝: Նկատենք, մանավանդ, որ հայերենի Ազգուլիսի բարբառը պահպանել է նախավոր արմատական հ-ով հնագույն ձևը՝ բրբ. կահիլ «կոխել»⁵: Այդ է հուշում նաև ուսպանուներեն *vave kai kohe* բառակապակցության իմաստը:

Հայերեն կոխ արմատը համարվում է անհայտ ծագման, նաև կասկածանքով՝ ենթաշերտային բառ⁷: Այն հայերենի բազմիմաստ եւ արգասավոր բառերից է, օժտված է ոչ միայն տարբեր իմաստներով՝ 1. «գոտեմարտություն, մենակռիվ», 2. «անհանգիստ քուն, մղձավանջ», 3. «երեխաների հիվանդություն...», 4. «կոխով հիվանդ», 5. «կոխան» եւ այլն, այլև ծնունդ է տվել բազմաթիվ ու բազմիմաստ արտահայտությունների, այդ թվում՝ կոխան (տես՝ Հովհ. Թումանյանի հայտնի՝ «Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի...» տողը), ընդկոխ առնել կամ ունել «կոխան անել, ոտնատակ տալ, կախկռտել», կոխ տալ «ոտների տակ տրորել, կոխոտել, ոտնակոխ անել», կոխած (ծածկաբ.) «հող», կոխել ա) «ոտքը դնել

⁴ Անդ, էջ 346:

⁵ Անդ, էջ 414:

⁶ ՀԱԲ, հտ. 2, էջ 615:

⁷ Անդ, էջ 615, Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 414:

գետին կամ մի բանի վրա», բ) գռնկ. «զուգավորվել կնոջ հետ», գ) «մի բանի մեջ իջեցնել, ընկղմել, մտցնել» եւ այլն⁸,

բ) հաջորդ հուշումը կապված էր ուսանողներին նույնարմատ kohio բառի հետ, որը նշանակում է «տղամարդու առնանդամ»: Այս բառով է կազմված ուսանողներին kohiohaga (ko-hio-haga) «զուգավորվել», «կենակցել» բառակապակցությունը: Երկուսն էլ համընկնում են հայերեն «կոխել» բառի հետեւյալ կիրառության հետ՝ կոխել գռնկ. «զուգավորվել կնոջ հետ», «մի բանի մեջ իջեցնել, ընկղմել, մտցնել» եւ

գ) գրաբարյան կոխ արմատով կազմված անկոխ «որտեղ ոտք չի կոխած», անկոխելի «չի կարելի ոտք դնել, կոխել», «անանցանելի» բաղադրությունները միանգամայն համադրելի են ուսանողներին vave kai kohe բառակապակցությանը, որի իմաստն է «անմատչելի, անհասանելի», կամ, որ նույնն է՝ անկոխ, անկոխելի:

Այսպիսով, հայերենի օգնությամբ մեծ հավանականությամբ վերականգնվում է ուսանողներին kohe₂ արմատի իմաստը՝ «կոխել», որ է նաեւ «ոտքը դնել գետին կամ մի բանի վրա», «զուգավորվել կնոջ հետ», «մի բանի մեջ ընկղմել, մտցնել»: Ուրեմն՝ կարելի է արձանագրել հետեւյալ եզրահանգումները.

ա) ուսանողներին vave kai kohe «անմատչելի, անհասանելի» իմաստով բառակապակցության հիմնական անդամը kohe բառն է,

բ) բառակապակցության իմաստից ելնելով՝ վերջինիս հայերեն տառացի զուգահեռը ուսանողներին-հայերեն բառային զուգահեռներում գործող h>x (հ>խ) օրինաչափ հերթագայության արդյունքում ստացվող կոխ «ոտքով կոխել, ոտնակոխ անել», «կոխկռտել» արմատն է եւ

գ) ամբողջ բառակապակցությունն իր ժխտական իմաստով («անմատչելի, անհասանելի») համապատասխանում է նույն կոխ արմատով բաղադրված հայերեն անկոխ «որտեղ ոտք չի կոխած» եւ անկոխելի «չի կարելի ոտք դնել, կոխել», «անանցանելի» բառերի իմաստներին:

Մնում է պարզել, թե այդ դեպքում բառակապակցության հիմնական անդամ kohe արմատին նախորդող երկու բառերն ի՞նչ իմաստ ունեն եւ դրանցից ո՞րն է ժխտական իմաստ արտահայտող բառը: Պարզվեց, որ kohe արմատին անմիջապես նախորդող ուսանողներին kai₁ արմատն

⁸ Ս. ՄԱԼԵԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, ՀՍՄԻ Պետհրատ., Եր., 1944, էջ 457:

ունի «չ-», «չէ», «սակայն» իմաստներ, ինչից հետևում է, որ ռապանուերեն *kai kohe* = հայերեն *չ- կոխ կամ չէ կոխ* (տե՛ս ան-կոխ «որտեղ ոտք չի կոխած»): Եւ ամենակարեւորը՝ ռապանուերեն *kai*₁ «չ-», «չէ», «սակայն» իմաստակիր բառը միանգամայն համադրելի է հնդեվրոպական վերականգնված *-k'- մասնիկի հետ, որից Գ. Զահուկյանը ծագած էր համարում ոչ բառի -չ բաղադրիչը (տե՛ս նաեւ Պատրուբանիի ենթադրած հնիւ. *k₂e-ն*):

Այն փաստը, որ ռապանուերեն *kai*₁ արմատն ունի «չ-», «չէ», «սակայն» իմաստներ, մեզ համար անակնկալ չէր հետեւյալ պատճառով. ինչպես արդեն նշվել է, ռապանուերենում ժխտական իմաստ արտահայտող հիմնական բառերը *tae*₁ եւ *te*₃ արմատներն են՝ «չ-, չէ», «առանց», «հրաժարվել» եւ այլ իմաստներով, որոնց գրաբարյան զուգահեռները տ-, չ- ժխտական մասնիկներն են: Հիշեցնենք, որ պոլիենգրիական լեզուներում գործում է *t/k* հերթագայություն: Ընդունված տեսակետի համաձայն՝ այն հատուկ է արեւելապոլիենգրիական լեզուներից հավայերենին. օրինակ՝

ռապան. *tai* – հավայ. *kai* «ծով», ռապան. *tagata* – հավայ. *kanaka* «տղամարդ», ռապան. *teera* – հավայ. *keela* «այս», ռապան., տահիտ. *Tahiti* – հավայ. *Kahiki*, ռապան. *mate* – հավայ. *make* «մեռնել», ռապան. *Taaroa* – հավայ. *Kanaloa*, ռապան. *Tu* – հավայ. *Ku*, ռապան. *Tane* – հավայ. *Kane* «դիցանուններ» եւ այլն:

Մեզ հաջողվել է պարզել, որ *t/k* հերթագայությունը գործում է նաեւ բուն ռապանուերենում. օրինակ՝ ռապան. *ta*₁ «մասին, վերաբերյալ», «-ից, բացառական հոլովի իմաստ» եւ *ka*₁ «մասին, վերաբերյալ», «-ից, բացառական հոլովի իմաստ», *tae*₁ «չ-», «չէ», «առանց», «հրաժարվել» եւ *kai*₁ «չ-», «չէ», «սակայն», *te*₃ «առանց, չ-» եւ այլն: Ակնհայտ է, որ ռապանուերեն *ta*₁, *tae*₁, *te*₃ «չ-, չէ» եւ նույնիմաստ *ka*₁ եւ *kai*₁ իմաստակիր բառերից են սերում հայերենի տ-, չ- ժխտական նախածանցները եւ բարբառային չէ բառը, որի անմիջական նախածեւը ռապանուերեն *te*₃ «առանց, չ-» բառն է:

Հետեւություններ.

1. հայերենի տ- եւ չ- ժխտական նախածանցները նույնաձագում են,
2. բնիկ հայերեն չ- ժխտական նախածանցի եւ ոչ բառի -չ բաղադրիչի աղբյուրը հավասարապես կարող են լինել թե՛ ռապանուերեն *ta*₁, *tae*₁, *te*₃ «չ-, չէ» եւ թե՛ նույնիմաստ ռապանուերեն *ka*₁ եւ *kai*₁ իմաստակիր բառերը:

Այսպիսով՝ ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների քննությունը ցույց է տալիս, որ Գ. Ջահուկյանի կարծիքը, թե բնիկ հայերեն ոչ բառի -չ տարրը ծագում է հ.-ե. վերջահար **-k'*- մասնիկից, ճիշտ է եւ նրա ենթադրած «վերջահար **-k'*- մասնիկ»-ի նախաձեւը ռապանուերեն լեզվում պահպանված վաղնջագույն հայերեն *kai*, «չ-, չե» իմաստակիր բառն է:

Այս վերլուծությունից հետո փաստորեն անորոշ է մնում բնիկ հայերեն ոչ բառի առաջին բաղադրիչի՝ ու-ի հարցը: Վերջինիս պատասխանը գտնելու համար փորձենք պարզել, թե ի՞նչ է նշանակում եւ ի՞նչ գործառույթ ունի ռապանուերեն *vave kai kohe* բառակապակցության առաջին անդամը՝ *vave* բառը:

Այն ռապանուերենում առկա է երկու ձեւով՝ *vave*₁ եւ *vave*₂, որոնցից *vave*₁ արմատն ունի «ալեբախություն, ալեկոծություն» իմաստ: Նկատենք, որ *vave kai kohe* բառակապակցությունը երկրորդ անգամ նշված է այն արմատի տակ, ինչը խոսում է այն մասին, որ բառակապակցության հիմնական անդամի դերում հնարավոր է համարվել տեսնել նաեւ այն բառը (*kohe* (?)-ից բացի): Այսինքն՝ բառակապակցությունը նշված է *vave*₁ «ալեբախություն, ալեկոծություն» արմատի տակ՝ ըստ երեւույթին նկատի ունենալով «այնպիսի տեղ, ուր ալիքները կամ ալեբախությունը չի հասնում»: Սակայն պետք է նկատել, որ բառակապակցության ընդհանրական՝ «անմատչելի, անհասանելի» իմաստը նման սահմանափակման (միայն ալիքներին, միայն ալեբախության համար անմատչելի) հնարավորություն չի ենթադրում: Այդ դեպքում ի՞նչն է պատճառը, որ բառակապակցությունը բերված է նաեւ «ալեբախություն, ալեկոծություն» իմաստ ունեցող *vave*₁ արմատի տակ:

Գրեթե համոզված ենք, որ դժվարանալով բացատրել «անմատչելի» վերացական բառի իմաստը, տեղաբնիկները ստիպված են եղել պարզապես ցույց տալ այնպիսի մի տեղ, որտեղ օվկիանոսի ալիքները չեն հասնում, ինչն էլ հիմք է տվել բանահավաքներին՝ *vave*₁ արմատին վերագրելու «ալեբախություն, ալեկոծություն» իմաստ (մանավանդ, որ այն նույնանում է անգլ. *wave* «ալիք» բառին)⁹:

Մեր համոզվածությունն ունի իրական հիմք. օրինակ, ռապանուերեն *tanetane* (*tane-tane*) բառի իմաստն արտահայտելու համար բառարա-

⁹ Այս մասին՝ քիչ ավելի ուշ:

նում բերվում է մի երկար բացատրություն, բառացի՝ ռապան. tanetane (tane-tane) «բռնած պահել նավակը, որպեսզի հոսանքը նրան չքշի»: Այնինչ այն սովորական կրկնավոր բարդություն է, որի tane արմատը տառացիորեն համընկնում է անհայտ ծագման համարվող հայերեն տանիլ «տանել, կրել, փոխադրել» բառի հետ¹⁰: Հատկանշական է, որ հայերենը եւս ունի վերջինից կազմված կրկնավոր բաղադրություն՝ բրբ. (Ղրբ.) տընըտանէ, որը գործածվում է կապակցության մեջ՝ կյրօղը տընըտանէ անէ «գրողը տանի»՝ սաստկական իմաստով (հմմտ. ռապան. tanetane – հայ. բրբ. տընըտանէ (tənətane):

Այսպիսով, մենք կասկածելի ենք համարում $vave_1$ «ալեբախություն, ալեկոծություն» բառի առկայությունն այս բառակապակցության մեջ՝ նկատի ունենալով վերջինիս իմաստի ընդհանրական բնույթը, այն է՝ առհասարակ «անհասանելի, անմատչելի» եւ ոչ թե «միայն ալիքների՝ համար անմատչելի»:

Այժմ փորձենք պարզել նույնարմատ ռապան. $vave_2$ բառի հնարավոր դերակատարությունն այս բառակապակցության մեջ: Այսինքն՝ այն բառի, որը մասնագետներն առհասարակ չեն կապել այս բառակապակցության հետ. այն նշված է միայն ռապան. kohe եւ $vave_1$ բառերի հետ կապված:

Ռապանուերեն $vave_2$ -ը «մասնիկ է, գործածվում է հրամայական եղանակի բայերի ժխտական ձևերում»՝ «բայց», «բայց չ-», «սակայն չ-» իմաստային երանգներով: Որպես այդպիսին՝ այն համեմատելի է հայերենի այսպես կոչված ներհակական (ընդդիմական) շաղկապների կամ նախադրությոնների հետ, որոնք ստորաբաժանվում են ժխտական, սահմանափակող, տրոհական, հակասական եւ այլ տեսակների:

Ռապանուերեն $vave_2$ -ը, ըստ ամենայնի, պատկանում է բառաձևի R-R տիպին, այսինքն՝ երկարմատ (երկձևույթ) բարդություն է (va-ve): Ինչպես ցույց են տվել մեր երկարամյա հետազոտության արդյունքները, ռապանուերեն մի շարք երկվանկ բառերի բառաձևի տիպը եւ ձևույթի սահմանները որոշելուն մեծապես նպաստում են հայերենի մենարմատ զուգահեռները¹¹:

Բերենք օրինակներ.

¹⁰ ՀԱԲ, էջ 368, Գ. ՋԱԶՈՒԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 720:

¹¹ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Կրկնությունը որպես բառակազմական միջոց պոլինեզիական լեզուներում եւ հայերենում, էջմիածին, 2020, Զ, էջ 32–50, Պոլինեզիական բառաձևի կառուցվածքի ճշգրտումներ հայերեն զուգահեռների հետ համեմատության միջոցով, «էջմիածին», 2022, Գ, էջ 70–91:

նապան, tata₃ «խփել», tutu₅ «խփել, ծեծել» - գրբ. տալ բայի երեք (տու, տու-ր, տա) արմատական ձևերը,

նապան, ուոս «բարակ, նիհար» - գրբ. նու-րբ «բարակ, թեթև, անգայտ» (հնիւ. *snōbhrī` *snēbh* արմատի միջին ձայնդարձից,¹² ըստ Գ. Ջահուկյանի՝ **snōbrī` * snēbh-ri-* «նուրբ, նեղ» արմատից)¹³,

նապան, ուոս «լոսկյաց», «համբ»- գրբ. մու-ն «լուս ու մունջ լսող» (**mu-s-ro` *mu-* բնաձայնական արմատից), մու-նչ «խօսք» (բխեցվում է **munkio-*՝ **mun-* բնաձայնական արմատից)¹⁴,

նապան, vīvi₂ «շղթա» - գրբ. վե-րտ «շղթայի պես հիւսուած (գրահ)», որից ունենք վերտել «հյուսել, շարվել»¹⁵ եւ այլն:

Այսպիսով՝ անհիմն չէ ենթադրել, որ ուսականներեն vave₂-ը երկար-մատ բառ է եւ պետք է ստուգաբանվի որպես vave (va-ve) «բայց չ-, բայց ոչ» տարարմատ կազմութիւն: Քանի որ այն «բայց չ-, բայց ոչ» ներհակական շաղկապի դեր է կատարում, բնական է ենթադրել, որ ուսականներեն vave (va-ve) կրկնավոր բարդութիւն առաջին՝ va- բաղադրիչից է ծագում հայերենի բա-յց ստորադասական շաղկապը՝ v>b օրինաչափ հերթագայութիւնմբ եւ բաղաձայն տարրերի հետագա հավելումով. ուսականներեն va «բայց» (v>b) > գրբ. բա-յց «բայց, սակայն, միայն», տես նաեւ բրբ. (Ար. Դրբ.) բա «իսկ»:

Ասվածի համար համեմատել՝

նապան, va «խոսք» - գրբ. բա՛ (**bha-*), բնիկ հայերեն բալ «խօսիլ, ասել» բայի պարզ արմատը¹⁶,

նապան, voka «կոշիկ հագնել» - բոկ «բոկիկ, ոտքը մերկ» (*bhos-go- *bho-so-* «մերկ» հիմքից)¹⁷,

նապան, verega (*vere-ga*) «բերատու» - բեր «հողի բերած արդյունքը, որից՝ բեր-ք պտուղ» (**bher-* «բերել, տանել» արմատից)¹⁸ եւ այլն:

Մեր տեսակետի օգտին է խոսում նաեւ կարստի կարծիքը, որը բայց-ը կապում էր շումերերեն ba, ban բացասական մասնիկի հետ¹⁹: Վերջինս

¹² ՀԱԲ, էջ 474:

¹³ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 574:

¹⁴ Անդ, 332–333:

¹⁵ Անդ, էջ 709:

¹⁶ Անդ, էջ 109:

¹⁷ Անդ, էջ 133:

¹⁸ Անդ, էջ 125–126:

¹⁹ ՀԱԲ, հտ. 1, էջ 402–403:

ասես ռապանուերեն-հայերեն հնչյունափոխական շղթայի միջին՝ դեռևս բաղաձայն տարրերից զերծ օղակն է եւ համապատասխանում է հայ. բրբ. բա/պա (բա որ չէիր գալու, ինչի՞ խոստացար...) տարբերակին: Այսինքն՝ ունենք. ռապան. (իմա՛ վաղնջագույն հայերեն) va «բայց, բայց եւ այնպես» – հայ. բրբ. բա – շում. ba, ban «բացասական մասնիկ» – գրբ. բա-յց «բայց, սակայն» շարունակական զարգացում²⁰:

Ինչ վերաբերում է ռապանուերեն vave (va-ve) կրկնավոր բարդության երկրորդ՝ ve բաղադրիչին, այն ռապանուերենում հայտնի չէ եւ առանձին կիրառություն չունի, սակայն նրա տառացի զուգահեռը բնիկ հայերեն «ոչ» բառի հայ. բրբ. (Ղրբ. Սեբ.)²¹ վէ-չ/վէ-չ տարբերակի²² վէ- (ve-) բաղադրիչն է, որին համապատասխանում է գրաբարյան ո-չ բառի ո- տարրը (հիշեցնենք, որ, ըստ Գ. Զահուկյանի, հայերենում էլ այս բաղադրիչի «հարցը լիովին պարզ չէ», ինչին ականատես ենք նաեւ ռապանուերենում):

Այսպիսով՝ ռապանուերեն vave (va-ve) kai «բայց չ-, բայց ոչ» բառին հայերենում համապատասխանում է բարբառային [(va) = բա(յց)] + [(ve) = վէ] + [(kai) = չ] = հայերեն բայց վէ տարբերակը, որի գրաբարյան զուգահեռն է՝ «բա(յց) ո-չ»: Այլ կերպ ասած՝ մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ հայերենի բայց ոչ ներհակական շաղկապի հավանական նախաձեւը եղել է վա-վէ-չ, իսկ բնիկ հայերեն ոչ բառի նախաձեւը՝ վէչ:

Արդյունքում՝ ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների համեմատական վերլուծությամբ կատարված բնիկ հայերեն «ոչ» բառի ծագումնաբանական քննությունը ցույց է տալիս, որ այն ծագում է պոլինեզիական լեզուներում պահպանված վաղնջագույն հայերեն հետեւյալ ձևերից. ռապան. ve «ո» (=հայ. բրբ. վէչ «ոչ» բառի վէ (ve) բաղադրիչ) + ռապան. kai (=հայ. չ-, որը ծագած է համարվում *-k- մասնիկից):

Հետեւապես՝ ռապանուերեն vave kai արտահայտությունն ըստ ամենայնի անհրաժեշտ է ստուգաբանել ոչ թե ընդունված (vave kai) ձևով, այլ (va ve-kai) = բնիկ հայերեն բա(յց) վէ-չ կամ բայց ո-չ ներհակական շաղկապ կամ նախադրություն:

²⁰ Անդ, էջ 116: Գ. Զահուկյանը ենթադրում է, որ այն «հավանաբար կապված է բաց (բաց ի, ի բաց) ձևի հետ, բայց հնչյունական համապատասխանությունը չի բացատրված», նաև կասկածելի կապ է ենթադրում «հնդեվրոպական *(h)e(gʰ)- «բացի» նախաձեւի հետ:

²¹ ՀԱԲ, հտ. 3, էջ 562:

²² Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013, էջ 685:

Լրացում. ուսպանուերեն $vave_2$ բառի երկարմատ բնույթի բացահայտումը թույլ է տալիս $vave_1$ «ալեբախություն, ալեկոծություն» բառը եւս ստուգաբանել հետեւյալ հայերեն արմատներով. ուսպանուերեն vai «ջուր» (= գրաբ. վա-րդ «ջուր», անհայտ ծագման համարվող գրաբ. վա-թել (վո-թել/վիթեալ), վա-յթ «թափել»²³) + ուսպան. ve «?» (= գրաբ. վէ-տ «ծփանք», վէ-ժ «թափելը, արտահոսք, վիժում»²⁴): Մեր կարծիքը հիմնավորում ենք բաղաձայն տարրի հավելումով ստացված ուսպանուերեն հետեւյալ բառերի գոյությունը. $vetevete$ ($vete-vete$) «սանձարձակվել» (разнуздать) (= գրաբ. վէտ-վէտ-իլ, վէտ-վէտ-ում «ծփանք»²⁵), $hım'$ «ջրի ծփանք», «ալեկոծ ջուր», ինչը բառացիորեն համընկնում է ուսպան. $vave_1$ բառի «ալեբախություն, ալեկոծություն» իմաստին: Նկատենք նաեւ, որ վերջինս համեմատելի է անգլերեն $wave$ «ալիք» բառի հետ (արդյո՞ք նույնածագում...):

Կարծում ենք, որ մեր տարբերակած ուսպան. ve «?» անհայտ իմաստով բաղադրիչի ճշգրիտ զուգահեռը ոչ միայն հայերեն բբբ. վէ-չ «ոչ» բառի առաջին վէ- տարրն է, այլեւ անհայտ ծագման համարվող գրաբ. վէ-տ «ալի, ալիք» եւ չհավաստված իրանական աղբյուրից փոխառություն համարվող վէ-ժ բառերի նախաձեւը:

Ի մի բերելով ասվածը, հանգում ենք հետեւյալ եզրահանգման. ուսպանուերեն $vave\ kai\ kohe$ «անմատչելի, անհասանելի» իմաստով արտահայտությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե $kohe$ կամ $vave_1$ արմատների ներքո, ինչպես արվում է, այլ $vave_2$ արմատի տակ՝ որպես $va\ ve-kai\ kohe$ կազմություն: Վերջինս ստուգաբանվում է հայերեն բաղադրիչներով, որպես va (=հայ. բա-յց) - ve (=հայ. վէ կամ ո/վո) + kai (=հայ. չ) - $kohe$ (=հայ. կոխ) = հայերեն բայց վէ-չ(ո-չ) կոխ՝ «բայց ոչ կոխած» կամ «բայց ոչ կոխելի», ինչը բառացիորեն նույնական է հայերեն անկոխ «որտեղ ոտք չի կոխած», անկոխելի «չի կարելի ոտք դնել, կոխել», «անանցանելի» բառերին:

Այսպիսով, ուսպանուերենում պահպանված ենք գտնում ոչ միայն բնիկ հայերեն «ոչ» բառի՝ երկու բաղադրիչներից կազմված լինելու ապացույցը, ինչպես ենթադրում էին Հր. Աճառյանը, Գ. Զահուկյանը եւ այլք, այլեւ դրանց առանձին գործածություն ունեցող իմաստակիր նախաձեւե-

²³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 702–703:

²⁴ Անդ, էջ 710:

²⁵ Անդ, էջ 710:

րը: Հայերենի հետ համեմատությունը բացահայտում է ռապան. նոր *ve*՝ անհայտ իմաստով ձեռույթ, որի ճշգրիտ գուգահեռը հայ. բրբ. վէ-չ «ոչ» բառի առաջին վէ- տարրն է (գրաբ. ո-) եւ ռապան. *kai* «չէ, չ-, առանց» բառերը:

Ակադ. Գ. Ջահուկյանը բնիկ հայերեն ոչ բառի ո- տարրի մասին գրում է. «Ճիշտ է, այն կարծես համընկնում է ո- (<*kuo-) դերանվանական հիմքի հետ, բայց այդ դեպքում ո՞րն է ժխտական տարրը (*kuo-kue-պիտի նշանակեր «ով որ», «ով է», որի անցումը ոչ-ի դժվար է բացատրել)»²⁶: Կարծում ենք՝ այս կարծիքը նույնպես գոյություն իրավունք ունի, քանի որ ռապան. *ve*՝ «?» բաղադրիչը կարող էր հանդես գալ նաեւ որպես դերանվանական հիմք՝ հայերեն բրբ. վէր/վէրը հարաբերական եւ վէ՛ր/վէր՞ հարցական (գրբ. որ/որը եւ ո՞ր/ո՞րը) դերանունների համար: Այս դեպքում ռապանուերեն *ve-kai kohe* արտահայտությունը բառացիորեն կհամապատասխանի հայերեն վէր-չ(է) կոխ(ած) կամ վէրը չ(է) կոխ(ած) բառակապակցությունը:

Հայերենի հետ համեմատությունն ապացուցում է, որ ռապան. *ve* (?) անհայտ իմաստով ձեռույթը նաեւ հայերեն վէա եւ վէժ բառերի առաջին վէ- տարրն է, ինչը, ի հակառակ ընդունված կարծիքի, վկայում է այն մասին, որ վերջիններս նույնարմատ եւ բնիկ հայերեն բառեր են:

Մեկ հետաքրքիր դիտարկում եւս, նկատի ունենալով այն փաստը, որ ռապան. *kai* եւ *tae*, *te* նույնիմաստ ժխտական մասնիկներ են եւ ռապանուերեն *ve-kai* = հայ. վէ-չ «ոչ», ենթադրում ենք նաեւ նույնիմաստ **ve-tae* կամ **ve-te* «ոչ, չէ» բառի երբեմնի հնարավոր առկայությունն եւս: Վերջինից ծագած ենք կարծում միջազգային բառապաշարին պատկանող *veto* բառը՝ «արգելում եմ» իմաստով, ինչով իրացվում է «օրենսդիր օրգանների որոշումները կասեցնելու կամ վերացնելու իրաւունքը»²⁷, որից էլ ունենք «վէտօ դնել» արտահայտություն, որպես «ոչ ասել», «չեղարկել, կասեցնել»:

Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների հիման վրա կատարված ստուգաբանական քննությունը, ինչպես համոզվեցինք, հնարավորություն է ընձեռում հասնել լեզվավիճակի այնպիսի հնություն, երբ բնիկ հայերեն ոչ բառի ո- եւ -չ տարրերը անկախ գործածություն եւ

²⁶ Անդ, էջ 603:

²⁷ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, նշ. աշխ., էջ 333:

բառիմաստ ունեցող միավորներ էին: Բնիկ հայերեն ոչ բառի -չ տարրին համապատասխանող ռապանուերեն բառը միանգամայն համադրելի է ենթադրվող հնդեւրոպական նախաձեւին, իսկ ո- տարրին համապատասխանող ռապանուերեն արմատի հարցը փոքր-ինչ անորոշ էր, ինչպես հայերենում, սակայն շատ ավելի բազմիմաստ եւ կռահելի, ինչը նպաստեց ստուգաբանության իրականացմանը:

Այս եւ նման այլ փաստեր վկայում են պոլինեզիական լեզուների եւ հայերենի միջեւ խորը ծագումնաբանական կապերի առկայության եւ զարգացման ներքին միտումների նույնության մասին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայերեն, պոլինեզիական լեզուներ, ռապանուերեն, ոչ, բացասական բաղադրիչ, ծագումնաբանական քննություն, բառաշերտ, ստուգաբանություն:

РЕЗЮМЕ

Этимология исконно армянского слова «voch» (voč‘) («нет») до настоящего времени остаётся неполной и недостаточно разработанной, а мнения лингвистов относительно значений его составных компонентов нередко оказываются противоречивыми.

Этимологическое истолкование исконно армянского слова «voch» (voč‘) («нет»), основанное на рапануйско-армянских лексических соответствиях, позволяет реконструировать весьма древний языковой этап, на котором элементы «vo-» и «-ch» (-č‘) данного слова функционировали как самостоятельные, семантически значимые единицы. Показательно, что рапануйское слово kai «не, нет», соотносимое с компонентом -č (-č‘) слова «voch» (voč‘), полностью сопоставимо с индоевропейским прототипом, реконструируемым для того же элемента – энклитической частицей -k-. В то же время вопрос о рапануйском корне, соответствующем компоненту vo- (vo-), остаётся в определённой мере открытым (как и в армянском материале), однако, в отличие от армянского, допускает более предсказуемую реконструкцию.

Проведённое исследование выявляет прототипы компонентов исконно армянского слова «voch» (voč‘) («нет»), сохранившиеся в рапануйском языке, а также уточняет их семантику. Кроме того, проясняется двукорневая природа элемента vave в рапануйском выражении vave kai kohe; предлагаются этимологии рапануйского слова vave₁ «волны, морское волнение» и союза vave₂ «но нет, но не-» с привлечением армянских корней. Наконец, уточняются возможное происхождение, этимология и связь слова veto, относящегося к международной лексике, с исконно армянским словом «voch» (voč‘) («нет»).

SUMMARY

The etymology of the native Armenian word “voch” (voč‘) (“no”) is incomplete and imperfect, and the opinions of linguists about the meanings of its components are sometimes contradictory.

An etymological study based on lexical similarities between the Rapanui and Armenian languages allows us to establish the antiquity of the linguistic state in which the elements “vo-” (vo-) and “ch” (-č‘) of the native Armenian word “voch” (voč‘) (“no”) were semantic units with independent usage.

It is noteworthy that the Rapanui word kai “non, not” corresponding to the -č (-č‘) component of the word “voch” (voč‘) (“no”) is completely comparable to the Indo-European prototype recovered for the same element, the enclitic particle *-k-, while the question of the Rapanui root corresponding to the vo- (vo-) component is somewhat unclear (as in Armenian), but, unlike Armenian, predictable.

This study identifies the prototypes of the components of the native Armenian word “voch” (voč‘) (“no”) preserved in the Rapanui language, and their meanings, explains the dual-root nature of the element vave in the Rapanui phrase vave kai kohe, conducts an etymological analysis of the Rapanui word vave₁ “waves, sea roughness” and the conjunction vave₂ “but no, but not-” with Armenian roots; the possible origin, etymology and connection of the word veto, belonging to the international lexicon, with the native Armenian word “voch” (voč‘) (“no”) are also clarified.